

Հավելված 1. Հիդրօքսիքլորոքվինի փոխազդեցությունն այլ դեղերի հետ:

Հակացուցված համակցումներ

Ցիտալոպրամի, էսցիտալոպրամի, հիդրօքսիզինի և դոմպերիդոնի հետ,

Փորոքային առիթմիաների, այդ թվում «պիրուետ» տիպի առիթմիայի առաջացման բարձր ռիսկ:

Դեղադինամիկ փոխազդեցություններ

QT ինտերվալը երկարացնող և/կամ սրտի ռիթմի խանգարումների զարգացմանը պոտենցիալ նպաստող դեղեր

Սրտի ռիթմի փորոքային խանգարումների զարգացման բարձր ռիսկով պայմանավորված՝ հարկավոր է զգուշություն դրսևորել հիդրօքսիքլորոքվին նշանակելիս այն պացիենտներին, որոնք ընդունում են QT ինտերվալը երկարացնող այլ դեղեր ևս, օրինակ՝ IA և III դասի հակաառիթմիային դեղեր, եռցիկլիկ հակադեպրեսանտներ, հոգեմետ դեղեր, որոշ հակամանրէային դեղեր [օրինակ, մօքսիֆլօքսացին]):

Պետք չէ ընդունել հալոֆանտրին հիդրօքսիքլորոքվինի հետ միաժամանակ:

Ցիկլոսպորինի հետ

Հաղորդվել է արյան պլազմայում ցիկլոսպորինի կոնցենտրացիայի աճի դեպքերի վերաբերյալ՝ հիդրօքսիքլորոքվինի հետ միաժամանակ ցիկլոսպորին կիրառելիս:

Անտացիդների հետ

Անտացիդները կարող են նվազեցնել հիդրօքսիքլորոքվինի աբսորբցիան: Այդ պատճառով, անտացիդների և հիդրօքսիքլորոքվինի միաժամակյա կիրառման դեպքում, 2 դեղերի ընդունման միջև ժամանակահատվածը պետք է լինի 4 ժամից ոչ պակաս:

Այլ փոխազդեցություններ, որոնք պետք է հաշվի առնել

Դիզօքսինի հետ

Հաղորդվել է, որ հիդրօքսիքլորոքվինը կարող է ավելացնել դիզօքսինի կոնցենտրացիան արյան պլազմայում: Այդ պատճառով, այս երկու դեղերի միաժամանակյա կիրառման դեպքում, գլիկոզիդային թունավորումը կանխարգելելու համար, հարկավոր է նվազեցնել դիզօքսինի դեղաչափը՝ արյան պլազմայում դիզօքսինի կոնցենտրացիան հսկողության տակ պահելով;

Շարքարային դիարեոսի բուժման համար կիրառվող դեղերի հետ

Քանի որ հիդրօքսիքլորոքվինը կարող է ուժեղացնել ինսուլինի և այլ ներքին ընդունման հիպոգլիկեմիկ դեղերի ազդեցությունը, կարող է հարկավոր լինել նվազեցնել վերջիններիս դեղաչափերը՝ հիդրօքսիքլորոքվինի կիրառման սկզբում

Ամինոգլիկոզիդների հետ

Իմպուլսի նյարդամկանային հաղորդման վրա ամինոգլիկոզիդների արգելակող ազդեցության պոտենցում

Ցիստեոլինի հետ

Ցիմետիդինը ճնշում է հակամալարիային դեղերի մետաբոլիզմը, ինչը կարող է հանգեցնել արյան պլազմայում դրանց կոնցենտրացիաների աճին և մեծացնել կոդմնակի ազդեցությունների (հատկապես թունային) առաջացման ռիսկը:

Նեոստիգմինի և պիրիդոստիգմինի հետ

Անտագոնիստական ազդեցության

Կատաղության դեմ մարդու դիպլոիդ-բջջային ներմաշկային ցանկացած պատվաստանյութի հետ

Կատաղության դեմ, մարդու դիպլոիդ-բջջային ներմաշկային պատվաստանյութով առաջնային իմունիզացիային ի պատասխան առաջացող հակամարմինների նվազում

Այլ հակամալարիային դեղերի հետ, որոնք իջեցնում են ցնցումային ակտիվության շեմը

Հիդրօքսիքլորոքվինին կիրառումը կարող է հանգեցնել ցնցումային շեմի իջեցման: Հիդրօքսիքլորոքվինին համատեղ կիրառումը այլ հայտնի հակամալարիային դեղերի հետ, որոնք իջեցնում են ցնցումային շեմը (օրինակ, մեֆլոքվին), կարող է մեծացնել ցնցումների զարգացման ռիսկը:

Հակաէպիլեպտիկ դեղերի հետ

Հիդրօքսիքլորոքվինին և հակաէպիլեպտիկ դեղերի համակցման դեպքում հնարավոր է վերջիններիս ոչ բավարար արդյունավետությունը:

Պրազիբլանտելի հետ

Քլորոքվինին և պրազիբլանտելի փոխազդեցության հետազոտության մեջ նշվում է պլազիբլանտելի բիոհասանելիության նվազման մասին: Հայտնի չէ, արդյոք հնարավոր է նման ազդեցություն հիդրօքսիքլորոքվինինի հետ կիրառման դեպքում, թե ոչ: Հիդրօքսիքլորոքվինին և քլորոքվինին կառուցվածքային և դեղակինետիկ չափանիշների նմանությամբ պայմանավորված, նմանատիպ ազդեցություն կարելի է սպասել և պլազիբլանտելի ու հիդրօքսիքլորոքվինինի համատեղ կիրառման դեպքում:

Ազալիդազայի հետ

Գոյություն ունի ներբջջային α -գալակտոզիդազի ճնշման տեսական ռիսկ՝ հիդրօքսիքլորոքվինին և ազալիդազայի համատեղ ընդունման դեպքում

Ի հավելումն, Սանոֆի դեղագործական ընկերությունը թարմացրել է դեղի անվտանգության տեղեկատվությունը՝ ցիտոքրոմի համակարգի արգելակիչների և խթանիչների և P-գլիկոպրոտեինի սուբստրատի հետ պոտենցիալ փոխազդեցության (ներառյալ դիօքսին և ցիկլոսպորին) մասին:

Ընկերությունը պատրաստվում է ներառել փոփոխությունները նաև ՀՀ-ում գրանցված Պլաքվենիլ դեղի ընդհանուր բնութագրում և ներդիր թերթիկում:

Ցիտոքրոմի համակարգի արգելակիչներ և խթանիչներ

Ցիմետիդինի՝ CYP2C8 և CYP3A4 չափավոր արգելակիչի, միաժամանակյա կիրառումը, հանգեցրել է քլորոքվինին կոնցենտրացիայի կրկնակի աճի:

Քլորոքվինին և հիդրօքսիքլորոքվինին կառուցվածքային, նյութափոխանակության և դուրս բերման ճանապարհների նմանությամբ պայմանավորված հնարավոր է նման փոխազդեցության հայտնաբերում նաև հիդրօքսիքլորոքվինին դեպքում: Հարկավոր է

զգուշություն դրսևորել CYP2C8 և CYP3A4-ի ուժեղ և չափավոր արգելակիչների (հեմֆիբրոզիլ, կլոպիդոգրել, ռիտենավիր, իտրակոնազոլ, կլարիթրոմիցին, թուրինջի հյութ) հետ միաժամանակ հիդրօքսիքլորոքվին կիրառելիս:

Հիդրօքսիքլորոքվինի և ռիֆամպիցինի՝ CYP2C8 և CYP3A4-ի ուժեղ խթանիչի, միաժամանակյա կիրառման դեպքում հաղորդվել է հիդրօքսիքլորոքվինի ոչ բավարար արդյունավետության վերաբերյալ: Հարկավոր է զգուշություն դրսևորել (օրինակ՝ դիտարկել արդյունավետությունը) CYP2C8 և CYP3A4-ի ուժեղ խթանիչների (ռիֆամպիցին, սրոհունդ (зверобой) կարբամազեպին, ֆենոբարբիտալ) հետ միաժամանակ հիդրօքսիքլորոքվին կիրառելիս:

P-գլիկոպրոտեինի սուբստրատներ

Չի գնահատվել հիդրօքսիքլորոքվինի արգելակող ազդեցությունը P-գլիկոպրոտեինի սուբստրատների վրա:

In vitro հետազոտություններում ցույց է տրված, որ բոլոր այլ թեստավորվող ամինոքսինոլները արգելակում են P-գլիկոպրոտեինը: Այդ պատճառով կա P-գլիկոպրոտեինի սուբստրատի կոնցենտրացիայի աճի հավանականություն՝ հիդրօքսիքլորոքվինի հետ միաժամանակյա կիրառման դեպքում: Հաղորդվել է արյան պլազմայում ցիկլոսպորինի բարձր կոնցենտրացիայի մասին՝ հիդրօքսիքլորոքվինի և ցիկլոսպորինի միաժամանակյա կիրառման դեպքում:

Արյան շիճուկում հիդրօքսիքլորոքվինի հետ միաժամանակյա կիրառման դեպքում հայտնաբերվում են դիօքսիինի բարձր կոնցենտրացիաներ՝:

Հարկավոր է զգուշություն դրսևորել (դիտարկել անցանկալի երևույթները և արյան պլազմայում կոնցենտրացիան) հիդրօքսիքլորոքվինը թերապևտիկ նեղ միջակայքով P-գլիկոպրոտեինի սուբստրատի (ինչպիսիք են դիօքսիինը, ցիկլոսպորինը, դաբիգատրան) հետ կիրառելիս: